

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի <<Օխտարի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿԻ – ի դասվարի ( 10 ժամ) , տեխնոլոգիայի (3 ժամ), Ն.Զ.Պ-ի (3.25 ժամ) ,Քաղաքաշտպանության կազմակերպչի (0.5),ինֆորմատիկայի (3.75 ժամ), կենսաբանության (6.5ժամ) ,քիմիայի(5.5 ժամ) , անգլերենի (16.25ժամ),աշխարհագրության(5 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:  
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/,
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ << Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (Ձև 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3 X 4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:  
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:  
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մայիսի 4-ից մինչև մայիսի 18-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը,բացի շաբաթ և կիրակի օրերից:  
Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:  
Մրցույթը տեղի կունենա մայիսի 24-ին՝ 12:00-ին, Սյունիքի մարզի Օխտարի միջնակարգ դպրոցում:  
Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-56-75-22 հեռախոսահամարով: